# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՄԵԾ ՏՕՆԻ ՇՈՒՐՋԸ

—

„Հորիզոնի" երեկայ և այսօրեայ համարներում տպած է Էջմիածնի Ցանձնաժողովի անդամներից մէկի՝ պ. Էդիլեանի ուսնական կարծիքը՝ հայ տպագրութեան և տառերի գիւտի տօնը կատարելու ժամանակի և այդ առթիւ կազմելիք ֆօնդի նպատակի մասին։

Պ. Էդիլեանը իր մասնաւոր նամակում այն ցանկութիւնն է յայտնում, որ վիճելի որոշ կէտերի մասին որքան կարծիքների բազմակողմանի փոխանակութիւններ կատարուեն՝ խնդիրն այնքան աւելի լուսաբանուած կը լինի։ Մի բան, որ աւելի արդիւնաւէտ կը լինէր, եթէ Էջմիածնի Ցանձնաժողովի վճռից առաջ մտածէր։

Սակայն ինչպէս յօդուածի ընդհանուր տրամադրութիւնն է ցոյց տալիս, պ. Էդիլեանը անձնապէս դէմ չէ, որ ժամանակի վերաբերմամբ զեթ այժմ համաձայնութիւն կայանայ. իսկ ինչ վերաբերում է կազմելիք ֆօնդի նպատակին՝ նա ցանկանում է, որ Էջմիածինը հասատ Ցայ իր որոշմանը, քանի որ իր կարծիքով զբաղրոցական ֆօնդը աւելի անհրաժեշտ է և կեանքի աւելի անյետաձգելի պահանջ, քան թէ գրական ֆօնդը։ Միւս կողմից էլ, սակայն, դէմ չէ, որ զբաղրոցական ֆօնդի կողքին ունենի և գրական ֆօնդը, միայն ոչ Էջմիածնի Ցանձնաժողովի կողմից, այլ՝ Թիֆլիզի։ „Օրինակ ես տալու եմ—գրում է պ. Էդիլեան—թէ զաղրոցական և թէ գրական ֆօնդին իմ կարծիքի չափ՝ այսպէս վարուղների թիւը, կարծում եմ հազարաւորների պէտք է հասնէ։»

Մենք մի կողմ ենք թողնում պ. Էդիլեանի կարծիքը հիմնաւորող պատճառաբանութիւնները, որովհետև զբաղրոց այնպիսի չուր վերցնող լինդիրներ են, որոնց մասնաւոր՝ գուցէ և առանձին վիճաբանութեան նիւթ ներկայանան, բայց հրաշք ներկայ դէպքում կարծում ենք, առաջին միամտու-

խնդիրը վճռող արգումենտ։ Օրինակ հէնց այն խնդիրը, թէ «գրագիտութեան տեսակէտից, մենք յետ ենք մնում մեր դրացիներից». կամ թէ „Որտեղ է տեսնուած, որ վերին իշխանութիւնը նպաստներ չտայ դպրոցներին։ Ժողովրդին այդպիսի օգնութեամբ պէտք է կապել իր ծխական դպրոցների հետ. Նա երբ իմանայ, որ ամեն տարի գոնէ չնչին նպաստ է ստանում կենդրոնից, այն ժամանակ և այդ կենդրոնի կարգադրութիւններին և ցանկութիւններին աւելի սիրով կենթարկի"…

Ընդունում ենք, որ գործնական տեսակէտից նման օգնութիւնը կարող է որոշ նշանակութիւն ունենալ ժողովրդի համար, բայց թէ դա հիմք դարձնել ազդեցութիւն ձեռք բերելու՝ թիւր է, որովհետև դրամը չէ, որ կապելու է ժողովրդին „վերին իշխանութեան" հետ, այլ կան բազմաթիւ կենսունակ և աւելի կարևոր հանգամանքներ, որոնք ուժեղ կապ կարող են հանդիսանալ, քան թէ „տարեկան չընչին նպաստը"։

Ապա թող մի էջմիածինը դիմադրի իր ժողովրդի պահանջներին բաւարարութիւն տալուն և փորձի «տարեկան չնչին նպաստով» միայն կապ պահպանել իր ժողովրդի հետ, կը յաջողի՞ տեսնենք։

„Թիֆլիզի յանձնաժողովը չի կարող արհամարհել էջմիածնի կազմակերպութեան գոյութիւնը, որովհետև նրա ձեռքի տակ կազմակերպութիւններ կան, որոնց միջոցով նա տօնին կարող է բաւականին ընդարձակ ծաւալ տալ ի վնաս Թիֆլիզի Յանձնաժողովի. օր. նա կարող է կարգադրել, որ բոլոր Հայոց դպրոցներում և եկեղեցիներում տօնուի հոկտեմբերի 13 ին. այդ կարգադրութիւնը կարող է այլ հայաբնակ վայրերի վրայ ևս տարածուել"։

Այսպիսի սպառնալիքներով և ոչ էլ յամառութեամբ չէ որ էջմիածինը կարող է խնդիրը յաջող վճռել և նպատակին հասնել. որովհետև նման լարումները կարող են և միշտ հակառակ արդիւնք տալ, որ նման դէպքերում արհամարհելով ժողովրդի կարծիքն ու ցանկութիւնները „էջմիածնի կարգադրութիւնները" կարող են մնալ լոկ կարգադրութիւններ, իսկ եթէ պաշտօնապէս էլ յայտարարուի „դպրոցներում և եկեղեցիներում տօնել հոկտեմբերի 13-ին" այնքան անշուք կարող են կատարել որ հաւասար կը լինի չկատարելուն։ Մի րոպէ պատկերացնում է իրեն պ. Էգիլեանը, որ էջմիածնի կարգադրութեամբ ժողովրդի ձեռներեցութիւնը ոչնչացնելով՝ հոկտեմբերի 13-ի հրամայուած մաղթանքները կարող են տեղի ունենալ „չորս պատերի" մէջ՝ առանց ժողովրդի։ Սրանք խնդիրներ են, որոնց մօտից անտարբեր անցնել յամենայն դէպս էջմիածնին չի յաջողուիլ։

Սակայն էջմիածնի Յանձնաժողովի անդամ պ. Էգիլեանի յօդուածների մէջ կայ մի լաւ տրամադրութիւն, եթէ կուզէք, մի բնական վախ, թէ՝ չը լինի մեծ տօնը ջլատմամբ կորցնի իր համազգային լինելը. և այդ վախն է, որ նրան բերում յանգում է մի խելացի եզրակացութեան. „գործը պէտք է այնպէս տակտով տանել, որ հնարաւոր չափերով քիչ մարմիններ դժգոհ մնան…"

Եւ այս ցանկութեանը չէ, որ «Հորիզոն»-ը պիտի դիմադրէ. ընդհակառակը, „Հորիզոն"-ի բռնած դիրքով վաղուց ի վեր չափազանց պարզ է եղած, որոշ և կորեկտ. Նրա միակ ցանկութիւնն էլ հէնց այն է, որ ոչ միայն „քիչ մարմիններ դժգոհ մնան", այլ բնաւ դժգոհներ չլինեն և դրա համար «Հորիզոնը» բազմիցս անգամ կրկնել է իր էջերից և կրկնում է ներկայումս, թէ՝ էջմիածինը մեծ տօնը համազգային դարձնելու համար պարտաւոր է խնդիրը խաղաղ, և որ գլխաւորն է, խելացի ճանապարհով վճռել, իսկ դրա համար, նա պիտի թողնի իր ինքնակալ դիրքը և յարգի նաև ժողովրդական տարրերի ձայնը, մի ձայն՝ որը աւելի շուտ է հնչել, քան թէ իրեն էջմիածնինը։

Այդ ձևով միայն էջմիածնի յոբելեանական Յանձնախումբը կարող կը լինի հարթել իր իսկ ձեռքով ստեղծած կնճիռը։

Ա. Ղազարեան